ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի
2024 թվականի հունիսի 24-ի՝ հարցման կարգով նիստի

1. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի փետրվարի 28-ի N 5 - 4 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ասպիրանտուրայի ընդունելության և ուսումնառության, հայցորդության ձևակերպման կարգում» փոփոխություն կատարելու մասին:**

2. «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանն առաջարկվող՝ **«ՀՀ պարենային անվտանգության ապահովման ռիսկերն ու դրանց նվազեցման հիմնական ուղիները» խորագրով հետազոտական թեման հաստատելու** մասին:

   Հետազոտական թեման քննարկվել և հաստատվել է գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 14-ի նիստում (արձանագրություն N 6):

3. **Ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու և վերահաստատելու մասին:**

   Ատենախոսությունների թեմաները քննարկվել, հաստատվել և վերահաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 14-ի նիստում (արձանագրություն N 6):

4. **«Ադրբեջանի պետական կառավարման և տնտեսական համակարգերի ամփոփ համապատկերը» կոլեկտիվ մենագրության հրատարակությունը երաշխավորելու** մասին (հրատարակության է ներկայացրել «Ամբերդ» հետազոտական կենտրոնը):

   Կոլեկտիվ մենագրությունը երաշխավորվել է հրատարակության գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 14-ի նիստում (արձանագրություն N 6):

5. Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Արգամ Համլետի Արտաշյանի «Թվային կառավարում: Առաջադեմ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունները» ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին:

Ուսումնական ձեռնարկը, 100 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 3-ի, ժամը 13:30-ի նիստում (արձանագրություն N 32): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

6. Լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Ռուբենի Ղարսլյանի** և նույն ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Երեմի Երկանյանի «Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների համար» ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին:

Ուսումնական ձեռնարկը, 200 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 3-ի, ժամը 13:30-ի նիստում (արձանագրություն N 32): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

7. Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Խաչատուրի Մարկոսյանի**, տնտեսագիտության թեկնածու **Էլյանորա Նորայրի Մաթևոսյանի**, տնտեսագիտության թեկնածու **Մերուժան Աշոտի Մարկոսյանի** և տնտեսագիտության թեկնածու **Արմեն Աշոտի Մարկոսյանի «Տնտեսական անվտանգություն» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին (հրատարակության է երաշխավորել մակրոէկոնոմիկայի ամբիոնը):

Ուսումնամեթոդական ձեռնարկը, 250 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 3-ի, ժամը 13:30-ի նիստում (արձանագրություն N 32): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

8. Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր **Մաքսիմ Հրաչի Մուրադյանի «Բարձրագույն մաթեմատիկա տնտեսագետների համար, մաս 2» ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին:

Ուսումնական ձեռնարկը, 150 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 20-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 34): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

9. Հասարակագիտության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու **Գառնիկ Արտաշեսի Սուքիասյանի** և նույն ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր **Նազելի Գառնիկի Սուքիասյանի «Բիզնես իրավունք» ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին:

Ուսումնական ձեռնարկը, 150 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 20-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 34): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

10. Լեզուների ամբիոնի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for Accountants (Practice File)» անգլերենի ուսումնաօժանդակ ուղեցույցի հրատարակությունը երաշխավորելու** մասին:

Ուսումնաօժանդակ ուղեցույցը հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 20-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 34): Այն նախատեսվում է հրատարակել հեղինակի միջոցներով:

11. Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի ավագ դասախոս **Կարեն Արշակի Առաքելյանի «Տնտեսագիտական վերլուծություն» ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին:

Ուսումնական ձեռնարկը, 150 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 20-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 34): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

12. Բակալավրի և մագիստրոսի մի շարք կրթական ծրագրերի ուսումնական պլանները հաստատելու մասին:

Հարցը քննարկվել և հաստատվել է գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 31-ի նիստում (արձանագրություն N 2):

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. հունիսի 24
Երևան